UNPRPD MPTF
Partnership on the Rights of Persons with Disabilities

UNFPA

Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության կազմակերպությունների ադվոկացիոն կարիքների գնահատում

Հետազոտական զեկույց

Երևան 2023

Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության կազմակերպությունների ադվոկացիոն կարիքների գնահատում

Հետազոտական զեկույց

Երևան 2023

«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության կազմակերպությունների ադվոկացիոն կարիքների գնահատում» հետազոտությունն իրականացվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի կողմից՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Հայաստանում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կիրարկման և հաշմանդամություն ունեցող անձանց ներառման ծրագրերի ներդրման համար բարենպաստ միջավայրի և էկոհամակարգի ստեղծում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընկերության Բազմագործընկեր նպատակային հիմնադրամի (UNPRPD MPTF) կողմից:

Զեկույցի բովանդակությունը բացառապես հեղինակների պատասխանատվությունն է, և դրանում արտահայտված մտքերն ու տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և/կամ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընկերության Բազմագործընկեր նպատակային հիմնադրամի տեսակետները:

© 2023, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

Հետազոտության ղեկավար և համակարգող՝
Հայկ Սմբատյան

Տվյալների հավաքագրման մասնագետ՝
Տատյանա Դարբինյան

Կազմակերպչական հարցերով օգնական՝
Սյուզաննա Գրիգորյան

Սրբագրիչ՝
Թագուհի Սուսլիյան

Ձևավորող՝
Մանե Արշալույսյան

Խորհրդատվական խմբի անդամներ՝
Արմեն Ալավերդյան, «Ունիսոն» ՀԿ
Արմինե Սահակյան, «Մենք կարող ենք» ՀԿ
Անուշ Ասլանյան, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ
Հայկ Մկրտչյան, Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա
Հասմիկ Կարապետյան, «Կարիտաս-Արեգակ» հիմնադրամ

Բովանդակություն

Առաջաբան 4

Մեթոդաբանական ռազմավարություն 6

Շրջանակներ 6

Մեթոդաբանություն 6

Մեթոդներ 7

Տվյալների աղբյուրներ 8

Ընտրանք և ընտրության չափանիշներ 9

Էթիկական և որակական նկատառումներ 10

Վերլուծության ռազմավարությունը 11

Վերլուծություն 11

Հիմնական բացահայտումներ 12

Ամփոփիչ մտքեր 32

Հավելվածներ 35

Հավելված 1 35

Հավելված 2 40

Հավելված 3 42

Առաջաբան

1

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընկերության Բազմագործընկեր նպատակային հիմնադրամի (UNPRPD MPTF) կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և սոցիալական ներառման իրավիճակի ուսումնասիրություն, որի հիման վրա հրապարակված զեկույցն[1] ամփոփում է Հայաստանին վերաբերող իրավիճակի վերլուծություն: Զեկույցի հիմնական բացահայտումներից մեկի համաձայն՝ ոլորտի շահառուների կարողություններում առկա են լուրջ բացեր իրականացնելու և մշտադիտարկելու հաշմանդամություն ունեցող անձանց ներառումն ապահովող գործողությունները:

Հաշվի առնելով սա՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կիրարկման և հաշմանդամութուն ունեցող անձանց ներառման ծրագրերի ներդրման համար բարենպաստ միջավայրի և էկոհամակարգի ստեղծում» ծրագրի նախաձեռնությամբ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ն հանձն է առել պատասխանատվություն աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին և նրանց շահերի ներկայացմամբ ու պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին: Աջակցությունն ուղղված է հաշմանդամություն ունեցող

1. Հասանելի է հետևյալ հղմամբ, 01.04.2023 թ. դրությամբ՝ https://www.unprpd.org/sites/default/files/library/2022-11/Situation_Analysis_CountryBrief_Armenia.pdf

անձանց կազմակերպությունների ադվոկացիոն կարողությունների զարգացմանը՝ նրանց հնարավորություն տալով արդյունավետորեն և բովանդակալից կերպով մասնակցելու հաշմանդամության ներառական քաղաքականության, օրենքների և կանոնակարգերի մշակմանը և իրականացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում են եռամյա գործողությունների պլանի կազմում, մշտադիտարկման և գնահատման միջոցառումների մշակում, ինչպես նաև երկօրյա դասընթաց՝ միտված աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին՝ տվյալների վրա հիմնված շահապաշտպանություն իրականացնելու գործում:

Այս նպատակով ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը նախաձեռնել և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի կողմից իրականացվել է ուսումնասիրություն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների շրջանում՝ գնահատելու նրանց կարիքները տվյալահենք ադվոկացիայի տեսանկյունից: Ուսումնասիրության արդյունքները միտված են օգնելու առավել թիրախային, հիմնավոր և փաստահենք դիտանկյուն ձևավորել ծրագրի շրջանակներում նախատեսվող գործողությունների իրականացման համար:

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2023 թ. փետրվարի 10-28-ն ընկած ժամանակահատվածում: Սույն զեկույցը պատրաստվել է առաջնային տվյալների վերլուծության արդյունքում: Այստեղ ամփոփված են կարիքների գնահատման արդյունքները, մասնավորապես՝ քանակական և որակական տվյալների վերլուծության արդյունքում ստացված հիմնական բացահայտումները: Զեկույցը մեկնարկում է գնահատման մեթոդաբանության հանգամանալից ներկայացմամբ, որին հաջորդում է տվյալների համադրական վերլուծությունը՝ հագեցած գծապատկերներով և ուղիղ մեջբերումներով: Զեկույցը եզրափակվում է ամփոփիչ մտքերի բաժնով, որում սինթեզված են հետազոտության առանցքային բացահայտումները և ներկայացված են տվյալահենք հուշումներ՝ կազմակերպությունների ադվոկացիոն կարիքների զարգացմանն ուղղված հետագա հնարավոր գործունեության համար:

Մեթոդաբանական ռազմավարություն

2

Շրջանակներ

Ուսումնասիրությունը նպատակ ունի պարզելու հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների և նրանց շահերի ներկայացմամբ ու պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ների կարիքները տվյալահենք ադվոկացիայի տեսանկյունից:

Ուսումնասիրության շրջանակներում ուշադրության առանցքում են եղել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների՝

- ինքնասահմանումը և սեփական դերի ընկալումները.
- ընկալումները ադվոկացիայի վերաբերյալ.
- փորձը և դիրքորոշումը ադվոկացիոն գործունեության ոլորտում.
- ցանցային գործունեության մեջ ներգրավվելու աստիճանը և պատրաստակամությունը.
- կարողությունների զարգացման առաջնահերթությունները:

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության նպատակին հասնելու համար իրականացվել է խառը մեթոդներով հետազոտություն: Հետազոտական այս ավանդույթը, միավորելով և՛ քանակական, և՛ որակական մեթոդաբանական ռազմավարությունների ուժեղ կողմերը, հնարավորություն

է տվել տեսնելու հետազոտվող հիմնախնդրի առավել ամբողջական պատկեր:

Խառը մեթոդներով հետազոտությունը ենթադրում է տվյալների հավաքագրման, վերլուծության և արդյունքների մեկնաբանման մեթոդների նպատակային համադրություն: Այս մոտեցման առանցքային առավելությունը տարբեր տեսակի տվյալների միջև կապեր և ինտեգրում ստեղծելն է: Այստեղ միևնույն երևույթը հնարավոր է լինում դիտարկել տարբեր տեսանկյուններից:

Երկու տեսակի տվյալների համադրումը հնարավորություն է տվել օգտվել ինչպես որակական տվյալների դետալային, համատեքստային բնույթից, այնպես էլ՝ քանակական տվյալների ընդհանրացվող, արտաքին վավերականություն ապահովող կողմից: Ըստ էության՝ մեթոդներից յուրաքանչյուրի ուժեղ կողմերը հաճախ լրացրել են միմյանց կամ մեղմացրել մյուսի թույլ կողմերը:

Բացի այդ, հաշվի առնելով հետազոտության պրակտիկ նպատակը, այս մեթոդաբանությունը զգալիորեն կրճատել է հետազոտական խիստ հարացույցներից կախվածությունը՝ թույլ տալով ուսումնասիրության շրջանակներում պահպանել խնդրակենտրոնության ու կիրառականության սկզբունքները:

Այս հետազոտության շրջանակներում կիրառվել է խառը մեթոդների **հաջորդական բացատրական** (explanatory sequential) մոդելը, որը նպատակահարմար է հատկապես այն դեպքերում, երբ որակական տեղեկությունները կարող են օգնել կոնտեքստավորելու քանակական տվյալներով ստացված օրինաչափությունները: Ինչպես մոդելի անվանումն է հուշում, այստեղ ենթադրվում է քանակական և որակական մեթոդների **հաջորդական** կիրառում, որտեղ քանակական տվյալներն ապահովում են իրավիճակի ընդհանուր պատկերը, իսկ որակական տվյալներն օգնում են **բացատրելու** և մեկնաբանելու ստացված պատկերը:

Գծապատկեր 1. Խառը մեթոդների հաջորդական բացատրական մոդել

Մեթոդներ

1. Քանակական հեռախոսային հարցում

Տվյալների հավաքագրման մեկնարկային՝ քանակական փուլում կիրառվել է հեռախոսային հարցման մեթոդը: Այս մեթոդը հնարավորություն է տվել սեղմ ժամանակահատվածում ապահովել համակարգված տվյալների մեծ ծածկույթ, քանի որ չեզոքացրել է ֆիզիկական տարածության մեջ տեղաշարժվելու անհրաժեշտությունը

թե՛ հետազոտողի և թե՛ հարցվողների համար: Մեթոդի շրջանակներում կիրառվել է կիսաձևայնացված հարցաթերթ (տե՛ս **Հավելված 1**)՝ ներառելով փակ՝ սահմանափակ պատասխաններով, ինչպես նաև մի քանի բաց հարցեր: Հարցաթերթը ծրագրավորվել է QuestionPro առցանց հարթակում, որն ուղղակիորեն օգտագործվել է հեռախոսային հարցազրույցների ընթացքում՝ լրացնելու և անմիջապես պահպանելու համար հեռախոսային հարցման պատասխանները:

Որպես մեթոդաբանական խելամիտ հարմարեցում՝ հարցումներից 2-ի դեպքում, երբ հարցվողն ունեցել է լսողության խնդիր, որի պատճառով չի կարող մասնակցել հարցմանը հեռախոսային սարքի օգնությամբ, հարցումն իրականացվել է տեսազանգի միջոցով՝ ժեստերի լեզվի թարգմանչի աջակցությամբ:

2. Առանցքային տեղեկատուների հետ որակական հարցազրույցներ

Տվյալների հավաքագրման երկրորդ՝ որակական փուլում կիրառվել է առանցքային տեղեկատուների հետ որակական հարցազրույցների մեթոդը: Այս անհատական զրույցները նպատակ են ունեցել լրացնելու և «գունավորելու» քանակական մեթոդի շրջանակներում արված բացահայտումները՝ փորձելով վերհանել դրանց ներքո առկա իմաստավորումները կամ պատճառական մեկնաբանությունները: Արդյունքում՝ հավաքագրված որակական տվյալները հարստացրել և կոնտեքստավորել են դուրս բերված ընդհանուր օրինաչափությունները: Կիրառվել է որակական հարցազրույցի չձևայնացված ուղեցույց (տե՛ս **Հավելված 2**), որը, ապահովելով զրույցի թեմատիկ ծածկույթը, միևնույն ժամանակ հարցազրուցավարին տվել է բավարար կառուցվածքային ճկունություն՝ հարցերի հերթականության փոփոխության, մեկնաբանող/խորացնող հարցեր տալու կամ արդեն պատասխանած հարցերը շրջանցելու տեսանկյունից: Հարցազրույցներն իրականացվել են հեռավար տեսազանգերի միջոցով:

Տվյալների աղբյուրներ

Հետազոտությունն ամբողջապես կառուցվել է առաջնային տվյալների հավաքագրման վրա: Թե՛ քանակական, թե՛ որակական մեթոդների շրջանակներում տվյալները հավաքագրվել են հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններից և նրանց շահերի ներկայացմամբ ու պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ներից: Հարցումներն ու հարցազրույցներն իրականացվել են մեծ մասամբ կազմակերպությունների տնօրենների շրջանում: Նրանց անհասանելիության դեպքում զրույցը տեղի է ունեցել ծրագրերի ղեկավարների կամ այնպիսի պաշտոն զբաղեցնող աշխատակիցների հետ, որոնք ենթադրաբար լայն պատկերացում ունեն կազմակերպության ընդհանուր գործունեության վերաբերյալ և կարող են հարցերին պատասխանել կազմակերպության անունից: Աղբյուրների հասանելիությունն ապահովվել է պատվիրատուի հետ համաձայնեցված կազմակերպությունների ընդլայնված ցանկի (տե՛ս **Հավելված 3**) միջոցով:

Ընտրանք և ընտրության չափանիշներ

1. Քանակական բաղադրիչ

Քանակական բաղադրիչում կիրառվել է համատարած ընտրանք: Այսինքն՝ ընտրանքի հիմքում ներառված բոլոր միավորները ընդգրկված են եղել ընտրանքային համախմբությունում: Սա նշանակում է, որ հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքները ներկայացուցչական են Հայաստանում գործող բոլոր հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների և նրանց շահերի պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ների համար:

Քանակական ընտրանքի թիրախային չափը կազմել է 40 (տե՛ս **Հավելված 3**): Սա Հայաստանում գործող՝ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց շահերի ներկայացմամբ և պաշտպանությամբ զբաղվող բոլոր ՀԿ-ների թիվն է: Ընտրության չափանիշը մեկն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց շահերի շուրջ իրականացվող գործունեությունը:

Նախատեսված 40-ից փաստացի իրականացվել է 35 հարցում: Հարցում չի անցկացվել 5 կազմակերպության հետ, որոնցից մեկը հետազոտության հեղինակ կազմակերպությունն է, իսկ մյուս 4-ի ներկայացուցիչների հետ չի հաջողվել պայմանավորվածություն ձեռք բերել:

2. Որակական բաղադրիչ

Որակական բաղադրիչում կիրառվել է շերտավորված նպատակաուղղված ընտրանք: Ընտրանքի այս ռազմավարությունը թույլ է տվել դիտարկման միավորների խումբը բաժանել տիպային շերտերի՝ ըստ կոնկրետ չափանիշների, և յուրաքանչյուր շերտում կատարել նպատակաուղղված ընտրություն: Այս ընտրանքը պատահական չէ և չի ենթադրում ներկայացուցչականություն, ընդհակառակը՝ այն ռազմավարական է և ենթադրում է տվյալների հավաքագրում այնպիսի միավորներից, որոնք հարուստ են տեղեկատվությամբ:

Որակական բաղադրիչում ընտրանքի չափը կազմել է 9: Ընտրության չափանիշները երեքն են՝ իրականացվող ծրագրի շրջանակներում ադվոկացիոն առաջնահերթություն[2], գործունեության ոլորտ և գործունեության տարածաշրջան: Ընտրությունը կատարվել է երկու փուլով:

Առաջին փուլում ընտրանքի հիմքում ներառված կազմակերպությունները բաժանվել են երեք շերտի՝ ըստ ադվոկացիոն առաջնահերթության: Շերտերը կազմվել են հետևյալ տրամաբանությամբ՝

Առաջնային	հաշմանդամություն ունեցող անձի կողմից ղեկավարվող ակտիվ կազմակերպություններ.
Երկրորդային	հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող և ադվոկացիոն ազդեցություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող մարդու կողմից ղեկավարվող պասիվ կազմակերպություններ.
Երրորդային	ադվոկացիայով չզբաղվող և/կամ պասիվ կազմակերպություններ:

2. Այս չափանիշի կիրառման համար հիմք է եղել առաջնահերթության՝ պատվիրատուի իրականացրած դասակարգումը:

Ընտրանքի ձևավորման երկրորդ փուլում յուրաքանչյուր շերտի ներսում ներառվել է 3-ական կազմակերպություն՝ ապահովելով դրանց բազմազանությունը՝ ըստ գործունեության ոլորտի և ըստ գործունեության տարածաշրջանի:

Էթիկական և որակական նկատառումներ

Հետազոտությունն էթիկական բարձր զգայունություն ունի: Սա պայմանավորված է նրանով, որ տվյալները հավաքագրվում են հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններից, հետևապես՝ մեծ մասամբ հենց հաշմանդամություն ունեցող անձանցից: Հաշվի առնելով թիրախ խմբի սոցիալապես խոցելիությունը՝ հետազոտության նախագիծը և մեթոդները կազմվել են ճկուն և խելամիտ կերպով՝ բացառելով հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպությունների նկատմամբ խտրական կամ սահմանափակող մոտեցումը: Միևնույն ժամանակ՝ էթիկական զգայունությունը համեմատաբար ավելի նվազ է, ի տարբերություն նույն թեմայով իրականացվող այլ հետազոտությունների, քանի որ այստեղ հետազոտության թիրախում կազմակերպությունների և ոչ՝ անձնական կարիքներն են: Թեպետ այս փաստն արդեն չեզոքացրել է հնարավոր էթիկական խնդիրների սրությունը, այնուամենայնիվ, հետազոտական թիմը, հիմնվելով բազմամյա հետազոտական փորձառության և պատվիրատուի հետ շարունակական խորհրդակցությունների վրա, խելամիտ իրավիճակային լուծումների միջոցով կարողացել է հասնել նրան, որ էթիկական բարդ իրավիճակների դեպքեր հետազոտության ընթացքում չեն գրանցվել:

Տվյալների որակն ապահովվել է մի քանի մեխանիզմների միջոցով:

Քանակական տվյալները հավաքագրվել և ստուգվել են ավտոմատացված համակարգի միջոցով: Սա հասցեագրել է տվյալների տեխնիկական ճշգրտության հնարավոր շեղումները: Տվյալների ներքին բովանդակային ճշգրտությունն ապահովվել է կազմակերպությունների ղեկավարների միջոցով, որոնք ենթադրաբար տեղեկացված են և լավ պատկերացում ունեն իրենց կազմակերպությունների կարիքների վերաբերյալ:

Որակական տվյալները հավաքագրել և վերլուծել են բազմամյա փորձ ունեցող հետազոտողներ: Հարցազրույցները ձայնագրվել են (հարցվողների նախնական համաձայնության պարագայում) և ծառայել որպես ստացված տեղեկատվության որակի ստուգման հիմք:

Կարելի է արձանագրել, որ ո՛չ քանակական, ո՛չ որակական տվյալների դեպքում որակի շուրջ վերապահումներ չկան, բացթողումներ ու սխալներ չեն գրանցվել:

Վերլուծություն

3

Վերլուծության ռազմավարությունը

Այս ուսումնասիրության շրջանակներում վերլուծությունը մեկնարկել է քանակական տվյալներից: Տվյալների հավաքագրումն ու մշակումն ավարտելուց հետո իրականացվել է տվյալների նկարագրական վերլուծություն, այսինքն՝ դուրս են բերվել առանձին հարցերի օրինաչափությունները՝ հաճախականությունների կամ տոկոսային համամասնությունների տեսքով: Սրան հաջորդել է ավելի խորքային վերլուծություն, որի ընթացքում տվյալները դիտարկվել են խաչաձև համեմատության մեջ՝ փորձելով դուրս բերել կոռելյացիաներ[3] և պոտենցիալ պատճառական կապեր մեկից ավելի փոփոխականների միջև: Վերլուծությունում անդրադարձ է կատարվել հիմնականում այն դեպքերին, երբ փոփոխականների (հարցերի) միջև բացահայտվել են վիճակագրորեն նշանակալի կապեր: Քանակական տվյալների վերլուծությունն ամբողջությամբ իրականացվել է SPSS ծրագրային փաթեթի օգնությամբ:

Սրան հաջորդել է որակական տվյալների վերլուծությունը: Իրականացված որակական բոլոր հարցազրույցների համար պատրաստվել են ամփոփումներ՝ ներառելով հարցազրույցների ընթացքում հնչած պատասխանների հիմնական կետերի գրառում: Այնուհետև բոլոր ամփոփումներից դուրս են բերվել ընդհանուր/կրկնվող թեմաները, ինչպես նաև այնպիսի բացահայտումները, որոնք թույլ են տվել առավել խորքային մեկնաբանություն և համատեքստային վերլուծություն ստանալ արդեն բացահայտված վիճակագրական օրինաչափությունների և տարբերությունների շուրջ: Որակական վերլուծությունն իրականացվել է ավանդական մեթոդով:

3. Կորելացիան երկու փոփոխականների միջև հարաբերակցության տեսակ է, որում մի փոփոխականի արժեքի միավոր փոփոխությունը զուգորդվում է մյուսում արժեքի նույնչափ փոփոխությամբ:

Ըստ էության, վերլուծության հենքն ի սկզբանե կազմել է քանակական տվյալների վերլուծությունը, որոնք լրացվել և կոնտեքստավորվել են որակական նյութով: Արդյունքը տվյալների համադրական վերլուծությունն է, որը փորձում է ոչ միայն նկարագրել, այլև բացատրել հետազոտության ուշադրության առանցքում գտնվող խնդիրները:

Ուստի, հաջորդ ենթաբաժնում ներկայացվում են վերլուծության արդյունքում ստացված հիմնական բացահայտումները: Ենթաբաժինը բաղկացած է չորս թեմատիկ մասից, որոնք առանձին-առանձին անդրադառնում են կազմակերպությունների ադվոկացիոն իրազեկվածությանն ու փորձառությանը, նրանց դիրքորոշմանը շահապաշտպանության գործունեության համատեքստում, միջավայրի՝ քաղաքականության և ցանցային համայնքի հետ նրանց կապին, ինչպես նաև կազմակերպական ու ադվոկացիոն կարիքներին:

Հիմնական բացահայտումներ

Ադվոկացիոն իրազեկվածություն և փորձառություն

Հետազոտության շրջանակներում նախ փորձել ենք վերհանել «ադվոկացիա» կամ «ջատագովություն» տերմինների մասին կազմակերպությունների իրազեկվածությունը: Ինչպես երևում է 2-րդ գծապատկերում, հարցված 35 կազմակերպություններից 29-ին ծանոթ են այս հասկացությունները, մինչդեռ 6-ը հարցին պատասխանել են «ոչ»:

Գծապատկեր 2. Ծանո՞թ են ձեզ «ադվոկացիա» կամ «ջատագովություն» տերմինները



Մինչ «ոչ» պատասխանած կազմակերպություններին անցնելը, անդրադառնանք, թե ինչ մեկնաբանություններ են ստացվել այն կազմակերպություններից, որոնք նշել են, որ հասկացություններն իրենց ծանոթ են: Հարցին «այո» պատասխանած կազմակերպություններին խնդրել ենք նշել, թե ինչպես կմեկնաբանեին այդ հասկացությունները: Արդյունքում՝ հարցվողների մեծ մասը ադվոկացիան սահմանել է գլխավորապես իբրև շահերի պաշտպանություն՝ նպատակաուղղված գործողությունների միջոցով, իսկ ջատագովությունը՝ գաղափարների առաջխաղացում, գովերգում և լոբբինգ՝ ուղղված սոցիալական փոփոխություններին:

Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ 29 կազմակերպություններից 6-ը դժվարացել են մեկնաբանել հասկացություններից առնվազն մեկը, հատկապես՝ ադվոկացիա տերմինը: Սրանից բացի, որոշ կազմակերպությունների շրջանում նկատելի է, որ թե՛ ադվոկացիա, թե՛ ջատագովություն հասկացությունները մեկնաբանելիս նրանք հիմնվում են բառարմատի իմաստը բացատրելու կամ այն թարգմանելու վրա: Սա

կարող է նշանակել, որ հասկացությունները բավարար չափով սահմանված չեն կազմակերպությունների մի մասի շրջանում, քանի որ, թեպետ բառերը որպես այդպիսին ծանոթ են նրանց, իրենց գործունեության համատեքստում դրանք իմաստավորելը և սահմանելը հեշտությամբ չեն ստացվում:

Կազմակերպություններից շատերը տարիների ընթացքում շահապաշտպանությունն իմաստավորել են տարբեր ադվոկացիոն գործիքներ օգտագործելու միջոցով: Որոշ դրամաշնորհային ծրագրեր ունեցել են հենց ադվոկացիոն նպատակներ, օրինակ՝ ներառելով մատչելիությունը խթանող գործողություններ:

> *Երբ դրա մասին գրեթե ոչ ոք չէր խոսում կամ ինստիտուցիոնալ լուծում որ չէր առաջարկում, մենք փորձել ենք ինստիտուցիոնալ այդպիսի լուծումներ առաջարկել, որպեսզի լինեն օրենսդրական, ենթաօրենսդրական փոփոխություններ,*
> *և որոշակի արդյունքի հասել ենք՝ աշխատելով այն ժամանակ նաև Ազգային Ժողովի, պատգամավորների, ֆրակցիաների հետ: Բայց դա, կրկնում եմ, կոնկրետ Էդ ծրագիրը եղել ա մոտ 15 տարի առաջ:*
>
> Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն. Երևան

Քանակական հարցման շրջանակներում հասկացությունների շուրջ իրազեկվածությունը ստուգելուց հետո հարցվողները, անկախ իրենց պատասխանից, տեղեկացվել են, թե ինչպես ենք մենք սահմանում ադվոկացիան և ջատագովությունն այս հետազոտության շրջանակներում[4]: Սրան հաջորդած հարցով փորձել ենք պարզել՝ կազմակերպությունը երբևէ իրականացրե՞լ է շահերի պաշտպանություն: 3-**րդ գծապատկերը** ցույց է տալիս, որ 35 կազմակերպություններից 6-ը երբևէ չեն ունեցել նման փորձառություն, սակայն կարևոր է նկատել, որ այդ 6 կազմակերպություններից 5-ը նշել էին, որ ծանոթ չեն հասկացություններին:

Ադվոկացիոն փորձառությունը ստուգելու/պարզելու համար առաջին հարցադրմանն «այո» պատասխանած կազմակերպություններին տրվել է ևս երկու հարց (տե՛ս **Գծապատկեր 4** և **Գծապատկեր 5**): 29 կազմակերպություններից 20-ը նշել են, որ չունեն աշխատակից, որը հենց համակարգում է կազմակերպության կողմից իրականացվող շահապաշտպանական գործունեությունը, իսկ 22-ը նշել են, որ չունեն ադվոկացիոն պլան կամ ռազմավարություն:

4. Հարցվողներին տրված սահմանումը հետևյալն է. «Ադվոկացիա», «ջատագովություն» և «շահապաշտպանություն» բառերը մենք կիրառում ենք միևնույն իմաստով: Այսինքն՝ նկատի ունենք այնպիսի գործունեություն, որն ուղղված է կոնկրետ անձանց կամ խմբերի շահերի ներկայացմանը և պաշտպանությանը»:

Գծապատկեր 3.
Ձեր կազմակերպությունը երբևէ իրականացրե՞լ է ադվոկացիա/շահերի պաշտպանություն



Գծապատկեր 4.
Ունե՞ք աշխատակից, որը հենց համակարգում է կազմակերպության կողմից իրականացվող շահապաշտպանական գործունեությունը



Գծապատկեր 5.
Ձեր կազմակերպությունն ունի՞ ադվոկացիայի/շահերի պաշտպանության պլան կամ ռազմավարություն



այո ոչ

> *Եթե մի աշխատող լիներ, որ ունենայինք, ու ժամանակ լիներ, մենք կկարողանայինք ավելի լավ շահապաշտպանություն անել, բոլոր օրենքների ներառականության ապահովման համար անել առաջարկություններ և այլն:*
>
> Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Շիրակ

Շահապաշտպանության տեսանկյունից մի շարք առաջարկություններ են դուրս բերվել որակական հարցազրույցների շրջանակներում: Սրանց թվում գրանցել ենք, որ կազմակերպություններն իրենք նախաձեռնել են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի շուրջ տարվող աշխատանքներ, աշխատել են կոնկրետ շահառուների հետ նրանց կարողությունների զարգացման ուղղությամբ, ինչպես նաև փորձել են փոփոխությունների հասնել հասարակությունում տարածված կարծրատիպերի վերացման ուղղությամբ:

> *Իրենք եկել են Հայաստան, մենք մեր կառավարություն անդամներին ենք տարել Ամերիկա, այնուհետև հանդիպումներ են եղել տարբեր, կառավարության տարբեր օղակների հետ, տարբեր նախարարությունների հետ, քննարկել են Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները, նաև օրենք ենք վերանայել և առաջարկություններ մշակել:*
>
> Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Շիրակ

Եվ դրա հետ զուգահեռ դու հասարակությանը սերմանում ես, որ գիտես ինչ,եթե ես հաշմանդամ եմ, դա չի նշանակում, որ իրավունքներս կարող են ոտնահարվել, կամ, չգիտեմ, կարող եք ինձ խղճաք, կամ չգիտեմ...

Այսինքն՝ երբ որ դու քո մեջ ունենում ես ուժ, դու քո մեջ զգում ես, որ դու հզոր ես, ուժեղ ես և հոգեբանորեն պատրաստ ես, դու Էդ նույն ձևով քո կողքի շրջապատին, հասարակությանն ես դաստիարակում, որ ինքը քո անձի հանդեպ և ընդհանրապես հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ լինի շատ հարգալից:

Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Երևան

Անկախ նրանից, թե որքանով են կազմակերպություններն իրազեկ եղել շահապաշտպանական գործունեության վերաբերյալ կամ որքան փորձ են ունեցել այդ առումով, մենք փորձել ենք նաև փոքր-ինչ կոնկրետացնել մեր պատկերացումը նրանց փորձառության վերաբերյալ ադվոկացիոն տարբեր գործողությունների մակարդակում: Թվարկվել են մի շարք գործողություններ, որոնցից յուրաքանչյուրի համար խնդրել ենք, որ կազմակերպությունները նշեն՝ դիմե՞լ են արդյոք այդ գործողություններին, թե՞ ոչ:

6-րդ գծապատկերից երևում է, որ բոլոր 35 կազմակերպությունները մեդիան կամ հանրային միջոցառումներն օգտագործելու փորձ ունեցել են: Մեծամասնությունը նշել է, որ հանրային/քաղաքական գործչի կամ նրա գրասենյակի հետ կապ հաստատելու (77%), կոնկրետ հիմնախնդրի հետազոտություն և վերլուծություն իրականացնելու (71%), ինչպես նաև ադվոկացիոն հանձնաժողովի կամ կոալիցիայի աշխատանքներին մասնակցելու (63%) փորձ ունի: Միևնույն ժամանակ, կազմակերպությունների մոտ կեսը չի իրականացրել քաղաքականության վերլուծություն՝ դրա բարելավմանն ուղղված առաջարկներով, ինչպես նաև չի մասնակցել հանրային ակցիաների կամ բողոքի ցույցերի:

Գծապատկեր 6. Ադվոկացիոն նպատակներով իրականացվող գործողությունների հանդիպման հաճախականությունը (N=35)



Այս ամենն ընդհանուր առմամբ արտահայտում է հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների շահապաշտպանական և ադվոկացիոն իրազեկվածությունն ու փորձառությունը: Միևնույն ժամանակ, կարևոր է անդրադառնալ նաև կազմակերպությունների այն խմբին, որոնք նշել են, որ ծանոթ չեն ադվոկացիա կամ ջատագովություն հասկացություններին:

Առաջին հարցադրումը (տե՛ս **Գծապատկեր 2**) շեշտադրում է ադվոկացիա և ջատագովություն տերմինները: Պետք է նկատել, որ սա բավարար վստահելի չափում չի լինի, եթե այն դիտարկենք մյուս չափումներից մեկուսացված: Հետևաբար՝ կարևոր է նկատի ունենալ, թե հատկապես այդ հարցին «ոչ» պատասխանած կազմակերպությունները ինչ պատասխաններ են տվել ադվոկացիոն իրազեկվածությանը և փորձառությանը վերաբերող մյուս հարցերի շրջանակներում: Այսպես, քանակական տվյալները վկայում են, որ «ոչ» պատասխանած 6 կազմակերպություններից՝

- 5-ը նաև չեն մասնակցել ադվոկացիոն հանձնաժողովի կամ կոալիցիայի աշխատանքների.
- 5-ը նաև չեն իրականացրել քաղաքականության վերլուծություն կամ չեն ներկայացրել բարելավման առաջարկներ.
- 4-ը նաև չեն մասնակցել հանրային ակցիաների կամ բողոքի ցույցերի.
- 3-ը նաև չեն իրականացրել հետազոտություն կամ չեն վերլուծել կոնկրետ հիմնախնդիր:

Այս տվյալների համադրական դիտարկումը թույլ է տալիս նկատել, որ առաջին չափումը, եթե դիտարկվում է մյուս հարցադրումների հետ միասին, ընդհանուր առմամբ ճշգրիտ է և հավանաբար իրականությանը մոտ պատկեր է մատնանշում կազմակերպությունների ադվոկացիոն իրազեկվածության մակարդակի վերաբերյալ:

Ադվոկացիոն դիրքորոշում և հաշմանդամության հայեցակարգում

Ադվոկացիոն փորձառությունն իսկապես կարելի է մասամբ բացատրել դրա մասին իրազեկվածության մակարդակով: Միևնույն ժամանակ, սա բավարար լայն պատկեր չի տալիս կազմակերպությունների ադվոկացիոն կարիքների մասին: Դրանք զուտ կազմակերպական կարիքներ չեն, որոնց մասին կազմակերպություններն ուղղակիորեն կարող են բարձրաձայնել. որոշ ադվոկացիոն կարիքներ կարող են բխել այն դիրքորոշումից, որը կազմակերպությունն ունի հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության նկատմամբ առհասարակ:

Թեպետ հարցված կազմակերպությունները լիովին կամ գոնե մասամբ համաձայն են, որ հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը պետք է կազմակերպության գործունեության առանցքում լինի (տե՛ս **Գծապատկեր 7**), կարևոր էր նաև պարզել, թե արդյոք կազմակերպությունները կիսո՞ւմ են հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության հայեցակարգի մասին միևնույն պատկերացումները:

Գծապատկեր 7. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը և ադվոկացիան պետք է լինեն կազմակերպության գործունեության առանցքում



Այս տեսանկյունից տարբեր հեղինակներ ներառական գաղափարախոսության կյանքի կոչման հարցում նկատել են որոշ բացեր կազմակերպությունների և ակտիվիստների գործունեությունում: Այդպիսի բացերը կարող են վտանգավոր լինել շահապաշտպանության արդյունավետ օրակարգի ձևավորման տեսանկյունից՝ միևնույն ժամանակ տարածելով կամ ամրապնդելով ներառական հայեցակարգի մասին որոշակի թյուրըմբռնումներ թե՛ ադվոկացիայով զբաղվողների և թե՛ հանրության շրջանում:

Հետազոտող և ներառական քաղաքականության վերլուծաբան Պրիվա Հանգադուի համոզմամբ[5]՝ այդպիսի սխալ պատկերացումներից մեկն այն է, որ հաշմանդամության ներառական զարգացման ամբողջ էությունը կենտրոնացված է հաշմանդամություն ունեցող անձանց շահերի շուրջ: Թեև հաշմանդամություն ունեցող անձինք շահում են արդար հասարակությունից, սակայն միայն հաշմանդամություն ունեցող անձանց օգուտ բերելուն միտված զարգացման ծրագրեր մշակելը կարող է խնդրահարույց լինել՝ հասարակության ընդհանրական ներառականության և արդարության գաղափարախոսությունների ամրապնդման առումով:

Հաշվի առնելով սա՝ ուսումնասիրությամբ փորձեցինք պարզել, թե որքանով են համաձայն ոլորտում գործող հայաստանյան կազմակերպությունները նմանատիպ բացառիկ քաղաքականությանը: **8-րդ գծապատկերից** պարզ է դառնում, որ 35 կազմակերպություններից 10-ն են միայն, որ ընդհանրապես համաձայն չեն, որ ներառական քաղաքականությունը պետք է ուղղված լինի բացառապես հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությանը: Մինչդեռ կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը՝ գրեթե 70%-ը, մասամբ (19 կազմակերպություն) կամ լիովին (5 կազմակերպություն) համաձայն է այս մոտեցմանը:

Այս բացառող մոտեցումը տրամաբանորեն կապվում է նաև մեկ այլ թյուրըմբռնման՝ հաշմանդամության բժշկական և բարեգործական մոդելների հետ:

5. Հասանելի է հետևյալ հղմամբ, 23.03.2023 դրությամբ՝ https://includovate.medium.com/nothing-about-us-without-us-4212a12e3bf0

Գծապատկեր 8. Կազմակերպությունները պետք է պաշտպանեն միայն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը



Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, հիմնվելով «ոչինչ մեր մասին՝ առանց մեզ» սկզբունքի վրա, այլընտրանքային մոտեցում է առաջարկում աշխարհում տարածված այն պատկերացմանը, թե հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների «փրկության» կարիքն ունեն: Կոնվենցիայով առաջադրվող այլընտրանքային մոտեցումը հայտնի դարձավ որպես հաշմանդամության սոցիալական մոդել, որի հիմնական դրույթն այն է, որ հաշմանդամություն ունեցող անձանց պետք է դիտարկել որպես սեփական շահերի ակտիվ կրողներ և սոցիալական գործակալներ, որոնք կարող են պրոակտիվ կերպով ներկայացնել և պաշտպանել իրենց իսկ իրավունքները:

Ըստ էության, հաշմանդամության բժշկական և բարեգործական մոդելներն ինչ-որ տեղ հակասում են հաշմանդամության ներառական զարգացման գաղափարախոսությանը և տեղ չեն թողնում ադվոկացիոն գործունեության կարևորությունը հայեցակարգելու համար: Ուստի հետազոտությամբ փորձեցինք պարզել նաև, թե ինչ մոտեցում ունեն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները հաշմանդամության ավանդական հայեցակարգերի նկատմամբ:

9-րդ գծապատկերից երևում է, որ կազմակերպությունների երկու երրորդից ավելին լիովին (10 կազմակերպություն) կամ մասամբ (15 կազմակերպություն) համաձայն է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն բժշկական օգնության և բարեգործական աջակցության կարիք:

Որակական տվյալները ևս հաստատում են, որ կազմակերպությունների մոտեցումը հաշմանդամության ավանդական մոդելների նկատմամբ տարբերվում է:

Որոշ կազմակերպություններ կտրականապես դեմ են արտահայտվում բարեգործական աջակցությանը և փաստում են, որ երբեք նման գործունեությամբ չեն զբաղվել: Այս համատեքստում երբեմն հիշատակվում է «Փարոս» համակարգը որպես այս առումով բացասական հետևանքներ ունեցած նախաձեռնություն: Այս տեսանկյունից կարևորվում է հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնությունը, այդ թվում՝ կրթության, աշխատանքի և տնտեսապես անկախ լինելու առումով:

Գծապատկեր 9. Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն բժշկական օգնության և բարեգործական աջակցության կարիք



Ես ամբողջ հոգով դեմ եմ եղել... Ընդհանրապես ցանկացած մարդուն, հաշմանդամին առավել ևս, պոդնոսով տալ, ասել՝ կեր: Չկա տենց բան: Գնա ստեղծի՝ կեր:

Որպեսզի և՛ քաղցր լինի ստեղծածը, և՛ ինքնուրույնություն ձեռք բերի...

Մենք երբևիցե օգնություն չենք բաժանել:

Ծառայություն մատուցող կազմակերպություն, Սյունիք

Կազմակերպությունների շրջանում նաև մտահոգություն է նկատվում, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողանա առաջ շարժվել, աշխատել, կրթվել, եթե օգնության սպասեն: Ըստ հարցվածների՝ օգնությունն ազդում է նրանց հոգեբանության և ապրելակերպի վրա, մինչդեռ, ըստ իրենց, հաշմանդամություն ունեցող մարդիկ հաճախ հենց իրենք են սպասում օգնության:

Գիտեք ինչ, օրինակ մեր մոտ, չգիտեմ, Հայաստանում ընդունված ա, որ

եթե հաշմանդամ ես, ուրեմն դու պարտադիր օգնության կարիք ունես կամ

բժշկական օգնության կարիք ունես, բայց ես համաձայն չեմ: Այսինքն՝ դա կարա ըլնի

ոչ հաշմանդամ մարդ, նույնպես ինքը ունենա դրա օգնության կարիքը կամ չունենա:

Բայց, այո, մեր Հայաստանում էդ խնդրին շատ ենք առնչվում, որ

հաշմանդամություն ունեցող անձինք միշտ սպասում են

ինչ-որ մի տեղից օգնություն կամ բժշկական օգնություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Երևան

ՉԷ՛, մենք դեմ ենք դրան: Ու իրենք չեն խրախուսում, որ աշխատի, որ բարեգործություն անում են... Ե՛վ հաշմանդամություն ունեցող անձին է վատ, իրա մոտիվացիան կորում է՝ ուսում ստանալու, հետո աշխատանք գտնելու, հետո առաջ գնալու,

և՛ հասարակությանը: Հասարակության մեջ արդեն կարծրատիպերը առանց էն էլ շատ խորն են, դառնում են ավելի շատ, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարիք ունեն բարեգործության:

Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Շիրակ

Միևնույն ժամանակ, հարցված կազմակերպությունների շրջանում տարածված է նաև այն մոտեցումը, որ այս մոդելները չպետք է դիտարկվեն հակադրության մեջ: Այս առումով կազմակերպությունները նշում են, որ կարծիք կա, թե սոցիալական մոդելն առաջադեմ է, իսկ բժշկականը՝ հետադիմական, մինչդեռ դրանք անպայմանորեն չեն բացառում միմյանց:

Պետք չի բացառել [բժշկական մոդելը], *որովհետև հաշմանդամություն ունեցող անձինք, դա գաղտնիք չի, ինչքան էլ մենք ասենք կարծրատիպ ա, ինչ ա, բայց ստատիստիկայով, հա՛, շատերը ունենում են ուղեկցող ինչ-որ նաև, ավելի շատ հիվանդություններ, քան հաշմանդամություն չունեցող... որոշ դեպքերում չեմ ասում բոլոր հաշմանդամության տեսակների: Այդ դեպքում, հա՛,*

բժշկականը ևս շատ կարևոր ա:

Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Երևան

Կազմակերպությունների մի մասը կարևորում է նաև կարիքակենտրոնությունը՝ անկախ մոդելներից: Ըստ այդմ՝ նախ պետք է հոգալ կենսական պահանջմունքների բավարարումը, հետո անցում կատարել ավելի բարձր մակարդակի պահանջմունքների բավարարմանը, ինչպիսիք են խմբային պատկանելությունը, կրթությունը, աշխատանքը և ինքնաակտուալացումը:

Այսինքն՝ ես չեմ ուզում ոչ մի բանը մենք հիմա շատ... ծայրահեղականություն չեմ ուզում, կարճ ասած: Թեև շատ լավ հասկանում եմ, որ էդ նույն բարեգործությունն ա փչացրել ու փչացնում երկրի բնակչության մեծ մասին՝

անկախ հաշմանդամությունից... Բայց մենք պիտի հասկանանք, որ էդ ամեն ինչը առաջնային կարիքներ են, որոնք պիտի բավարարվեն, ու հետո մենք պիտի զարգացնենք մարդուն, աճեցնենք իրան, իրա ինքնաընկալումը փոխենք...

Ծառայություն մատուցող կազմակերպություն, Երևան

Հաշմանդամության մոդելների հետ կապված մեր բացահայտումներն ընդհանրացնելու համար կարևոր է, որ այս հարցը չդիտարկվի մյուս հարցերից մեկուսացված: Այս առումով ուշագրավ կապ է բացահայտվել «Ծանո՞թ են ձեզ «ադվոկացիա» կամ

«ջատագովություն» տերմինները» հարցի և «Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն բժշկական օգնության և բարեգործական աջակցության կարիք» պնդման պատասխանների միջև:

1-ին աղյուսակից երևում է, որ ադվոկացիային/ջատագովությանը ծանոթ լինելուն վերաբերող հարցին «ոչ» պատասխանած 6 կազմակերպությունների 83.3%-ը (5 կազմակերպություն) նաև նշել է, որ լիովին համաձայն է հաշմանդամության ավանդական մոդելի դրույթ արտահայտող պնդմանը: Այս փոփոխականների նկատմամբ կիրառված վիճակագրական թեստերը փաստում են, որ դրանց միջև առկա է վիճակագրորեն նշանակալի կապ (Fisher's exact test[6], p^7=0.003): Ավելին՝ կապի հավանականությունը բացահայտելուց հետո փոփոխականների այս զույգի նկատմամբ կիրառվել է նաև կապի ուժգնությունը ստուգող թեստ, որի արդյունքում պարզ է դարձել, որ փոփոխականների միջև կապը կարելի է բնորոշել որպես սերտ կապ (Cramer's V[8] = 0.562, df=2):

Աղյուսակ 1. Ադվոկացիոն իրազեկվածության և հաշմանդամության ավանդական հայեցակարգերի միջև կապը

		Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն բժշկական օգնության և բարեգործական աջակցության կարիք			
		Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Ընդամենը
Ծանո՞թ են ձեզ «ադվոկացիա» կամ «ջատագովություն» տերմինները	Այո	5 17.2%	15 51.7%	9 31%	29 100%
	Ոչ	5 83.3%	0 0%	1 16.7%	6 100%

Սա նշանակում է, որ 95% վստահությամբ կարելի է պնդել, որ առհասարակ ադվոկացիայի/ջատագովության վերաբերյալ իրազեկվածության բացակայությունը (առնվազն այդ տերմինների իմացության մակարդակում) ամենայն հավանականությամբ պատճառահետևանքային կապի մեջ է հաշմանդամության բժշկական մոդելն արտահայտող պնդմանը համաձայնելու հանգամանքի հետ: Կարևոր է նկատել, որ պարզելու համար, թե այս երկուսից որն է պատճառը, իսկ որը՝ հետևանքը, կպահանջի սույն հետազոտությամբ չնախատեսված հավելյալ չափումներ:

6. Fisher's exact test-ը վիճակագրական թեստ է, որը հնարավորություն է տալիս պարզելու՝ արդյոք կամայական երկու փոփոխականի միջև հայտնաբերված կապը վիճակագրորեն նշանակալի՞ է, թե՞ կարող է լինել պատահականության արդյունք:

7. *p* արժեքը վիճակագրական նշանակալիության ցուցիչ է, որը մատնանշում է, թե որքանով է հավանական, որ կամայական երկու փոփոխականի միջև կապ գոյություն չունի: Հետևաբար՝ որքան փոքր է *p* թիվը, այնքան ավելի մեծ վստահությամբ կարելի է ժխտել, որ փոփոխականների միջև կապ գոյություն չունի:

8. Cramer's V-ն օգտագործվում է երկու փոփոխականների միջև կապի ուժգնությունը հասկանալու համար:

Թեև վիճակագրորեն նշանակալի կապ չի բացահայտվել իրազեկվածության և այլ փոփոխականների միջև, ուշագրավ է, որ «ոչ» պատասխանած 6 կազմակերպությունից՝

- 4-ը նաև լիովին համաձայն են, որ կազմակերպությունները պետք է պաշտպանեն միայն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը.
- 5-ը նաև չեն պատկերացնում (3-ը՝ ընդհանրապես, 2-ը՝ մասամբ), թե ինչպես է մշակվում որևէ ոլորտի քաղաքականությունը:

Մեկ այլ վիճակագրորեն նշանակալի կապ է բացահայտվել *«Կազմակերպությունն իրականացրել է քաղաքականության վերլուծություն և ներկայացրել բարելավման առաջարկներ»* և *«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը և ադվոկացիան պետք է լինեն մեր գործունեության առանցքում»* պնդումների պատասխանների միջև: **2-րդ աղյուսակից** երևում է, որ բացառապես բոլոր այն կազմակերպությունները, որոնք երբևէ իրականացրել են քաղաքականության վերլուծություն, նաև նշել են, որ հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը պետք է լինի իրենց գործունեության առանցքում: Ճիշտ կլինի պնդել, որ այս փոփոխականների միջև ևս պատճառահետևանքային սերտ կապ կա (p=0.019, Cramer V=0.420, df=1):

Աղյուսակ 2. Քաղաքականության վերլուծություն իրականացնելու փորձի և շահապաշտպանության նկատմամբ դիրքորոշման միջև կապը

		Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը և ադվոկացիան պետք է լինեն մեր գործունեության առանցքում		
		Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Ընդամենը
Կազմակերպությունն իրականացրել է քաղաքականության վերլուծություն և ներկայացրել բարելավման առաջարկներ	Այո	18 100%	0 0%	18 100%
	Ոչ	12 70.6%	5 29.4%	17 100%

Կարևորելով կազմակերպությունների առնչությունը քաղաքականության և հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների համայնքի հետ՝ հաջորդ բաժինն անդրադառնում է մեկ այլ կարևոր հետազոտական հարցի: Այն է՝ որքանո՞վ են կազմակերպությունների կարողություններն ու ցանկությունը բավարարում համագործակցելու և իրենց ամենօրյա գործունեությունից դուրս նախաձեռնություններում ներգրավվելու համար:

Կապ քաղաքականության և համայնքի հետ

Քանակական հարցման տվյալներով կազմակերպությունների գրեթե 90%-ը նշել է, որ լիովին (17 կազմակերպություն) կամ մասամբ (14 կազմակերպություն) պատկերացնում է, թե ինչպես է մշակվում որևէ ոլորտի քաղաքականություն: 35 կազմակերպություններից միայն 4-ն են նշել, որ ընդհանրապես համաձայն չեն առաջարկված պնդմանը: Կազմակերպություններից ոչ մեկը չի դժվարացել հարցին պատասխանելուց:

Գծապատկեր 10. Մեր կազմակերպությունը պատկերացնում է, թե ինչպես է մշակվում որևէ ոլորտի քաղաքականությունը



Ինչ վերաբերում է քաղաքական գործընթացների և կանոնակարգերի հետ կապված գործունեությանը (տե՛ս **Գծապատկեր 11**), կազմակերպությունների գրեթե 68%-ը լիովին կամ մասամբ իր գործունեությունը համարում է այդպիսին: Կազմակերպություններից 8-ը ընդհանրապես այդպես չեն համարում, իսկ 3 կազմակերպություն դժվարացել է հարցին պատասխանելուց:

Գծապատկեր 11. Մեր կազմակերպության գործունեությունը կապված է քաղաքական գործընթացների և կանոնակարգերի հետ



Այս մասին փաստում են նաև որակական տվյալները: Կազմակերպությունների մի մասը վստահ չէ, որ բավարար փորձառություն ունի այս հարցում:

... մենք ինքներս ինքնուրույն ոչ էդ փորձը ունենք, ոչ էլ կարողանում ենք դա կազմակերպել, բայց միանում ենք: Մենք էլ այլ կոալիցիաներին, շարժումներին և այլն պատրաստ ենք միանալու, որովհետև դա հենց մեր հարցերից, նպատակներից մեկն ա:

Ծառայություն մատուցող կազմակերպություն, Երևան

Հարցված կազմակերպությունների մոտ 71%-ը նաև լիովին կամ մասամբ համաձայն է, որ կարող է ազդեցություն ունենալ կոնկրետ քաղաքական խնդրի վրա (տե՛ս **Գծապատկեր 12**), մինչդեռ 7 կազմակերպություն այս հարցում վերապահում ունի:

Գծապատկեր 12. Մեր կազմակերպությունը կարող է ազդեցություն ունենալ կոնկրետ քաղաքական խնդրի վրա



Կազմակերպություններից 3-ը դժվարացել են հարցին պատասխանելուց: Սա նկատելի է նաև որակական տվյալներում:

Չգիտեմ, չեմ կարող ասել՝ ինչքանով կարող է ազդեցություն ունենալ, բայց ինձ թվում ա, դե, ի վերջո կազմակերպություն ա, կազմակերպությունն էլ իր գործունեությունն ա ծավալում, իր աշխատանքն ա կատարում: Ինձ թվում ա, մարդիկ կամ, չգիտեմ, ի վերջո հաշվի կնստեն և կարծիքը կլսեն մեր կազմակերպության հետ կապված, էլի:

Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Երևան

Միևնույն ժամանակ, նրանք, ովքեր փորձել են ազդեցություն ունենալ քաղաքականության վրա, հաճախ բախվել են մի կողմից կազմակերպությունների շրջանում «հավատի» բացակայությանը, մյուս կողմից՝ պետական համակարգի անկայունությանը:

> *Ամեն անգամ, երբ որ ուզում էինք մի հատ բան անեինք, մեկ էլ՝ հոպ, նախարարը փոխվեց: Մեկ էլ նոր մարդը հայտնվեց՝ գիտե՞ք, ես նոր եմ, հեսա չգիտեմ ինչ, մինչև հեսա եսիմ ինչ, եսիմ ինչ, մեկ էլ հոպ՝ նոր նախարար ունենք:*
>
> Ծառայություն մատուցող կազմակերպություն, Երևան

Նկատելի է նաև, որ քաղաքականության հետ կապը հաճախ պայմանավորված է հենց կազմակերպությունների ղեկավարների անձով: Այս երևույթը Հայաստանում հասարակական կազմակերպություններին բնորոշ ընդհանուր գիծ է, և հավանաբար զարմանալի չէ, որ այն առկա է նաև հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների շրջանում:

> *Անձամբ Էդքանի հետ հանդիպել եմ՝ ոչ մի կառույց՝ միջազգային և տեղական մակարդակի ու դեսպանատուն, համարյա Հայաստանում չի մնացել: Դրանից հետո էլ ի՞նչ ադվոկացիա: Ամենաուժեղ ադվոկացիան ես տարիների ընթացքում մենակս արել եմ:*
>
> Ծառայություն մատուցող կազմակերպություն, Սյունիք

> *...ես ինքս իմ կապերով, տենց բան անելով անում եմ, էլի, բայց ինձ պետք ա, որ մասնագիտական, էլի, պրոֆեսիոնալ մոտեցում կարողանանք ունենալ էդ շահերի պաշտպանության բնագավառում: Ե՛վ գիտելիք ունենանք, և՛ լայն կապեր ունենանք մասնագետների հետ՝ հետագայում մեզ ուղղորդումներ տալու համար:*
>
> Ծառայություն մատուցող կազմակերպություն, Գեղարքունիք

Ցանցային համագործակցության համատեքստում կազմակերպությունների ադվոկացիոն ակտիվությունը չափելու համար օգտվել ենք «Եվրոսիս» կազմակերպության հրապարակած հայեցակարգից[9], որում ներկայացվում են կազմակերպությունների կարողությունների գնահատման չափման մոտեցումներ: Հայեցակարգում առաջարկվում են կազմակերպությունների ցանցային համագործակցությունը չափելու ցուցիչներ՝ բաժանված 4 մակարդակի: Առաջադրված ցուցիչների մի մասը (տե՛ս **Աղյուսակ 3**) ստուգվել է քանակական հարցման շրջանակներում:

9. Հասանելի է հետևյալ հղմամբ, 23.03.2023 դրությամբ՝ https://cutt.ly/D4Th7Y1

Աղյուսակ 3. Ցանցային համագործակցության կարողության մակարդակները և ցուցիչները

Մակարդակ 1	Ցուցիչ 1	Կազմակերպության հիմնադիրները լրջորեն հետաքրքրված են մեր հասարակությունում փոփոխություններ իրականացնելու հարցով:
	Ցուցիչ 2	Կազմակերպությունը համայնքային/տեղական ցանցի/կոալիցիայի մաս է, որը զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով:
Մակարդակ 2	Ցուցիչ	Կազմակերպությունը պետական/միջազգային ցանցի մաս է:
Մակարդակ 3	Ցուցիչ 1	Կազմակերպությունը ցանցերի մաս լինելը համարում է ռեսուրսները հզորացնելու նախապայման:
	Ցուցիչ 2	Կազմակերպությունը օգտագործել է ցանցային համագործակցությունը ռեսուրսները հզորացնելու և նպատակներին հասնելու համար:
Մակարդակ 4	Ցուցիչ	Կազմակերպությանը պարբերաբար դիմում են, որ այն միանա հաշմանդամություն ունեցող անձանց կոալիցիայի:

Ինչպես երևում է աղյուսակից, յուրաքանչյուր ցուցիչ ներկայացված է որպես կազմակերպության մասին պնդում: **13-րդ գծապատկերում** ներկայացված է ընդհանուր 35 կազմակերպություններից յուրաքանչյուր պնդման համար ստացված «այո» պատասխանների թիվը: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ մակարդակները փոխբացառող չեն, այսինքն՝ կազմակերպությունները կարող են միաժամանակ գտնվել կարողությունների մի քանի մակարդակներում, իսկ ավելի կոնկրետ՝ դրսևորել տարբեր մակարդակներ բնորոշող հատկություններ (ցուցիչներ):

Գծապատկեր 13. Կազմակերպությունների ցանցային համագործակցության կարողությունների մակարդակները



Տվյալները վկայում են, որ կազմակերպությունների 1/3-ից քիչն է միայն (10 կազմակերպություն) գտնվում կարողությունների 4-րդ մակարդակում, այն է՝ երբ կազմակերպությանը պարբերաբար դիմում են, որ այն միանա հաշմանդամություն ունեցող անձանց կոալիցիայի: Համեմատաբար ցածր ցուցանիշ է գրանցել նաև ցանցային կարողությունների 2-րդ մակարդակը. կազմակերպություններից 19-ն են միայն պետական կամ միջազգային ցանցի մաս:

Գծապատկերից նաև երևում է, որ 1-ին և 3-րդ մակարդակների 1-ին ցուցիչները ամենաբարձր ցուցանիշներն են գրանցել, համապատասխանաբար, 32 և 31 «այո» պատասխաններ: Կարևոր է նկատել, որ այս երկու ցուցիչները չափվում են համեմատաբար ավելի դեկլարատիվ պնդումներով (այսինքն՝ հիմնադիրները հետաքրքրված են..., կազմակերպությունը համարում է...): Սա երևում է նաև որակական նյութում:

Միանշանակ ցանկալի ա, երբ որ ուժերը համախմբում են, ուժերը, ռեսուրսները միավորվում են, ավելի ենք հզորանում և ավելի մեծ ու շատ աշխատանքներ ենք կարողանում կատարել: Համագործակցությունը միշտ կարևոր ա, և մենակով չես կարող շատ բաների հասնել:

Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Երևան

Այսինքն՝ այս ցուցիչները ոչ այնքան ցանցային կարողությունն են չափում, որքան՝ համագործակցելու պատրաստակամությունը, ինչը, իհարկե, ևս կարևոր հանգամանք է: Միևնույն ժամանակ նույն՝ 1-ին և 3-րդ մակարդակներից յուրաքանչյուրի 2-րդ ցուցիչները չափում են ցանցային համագործակցության կարողությունն առավել գործնական փորձառության մակարդակում. այստեղ ցուցանիշները համեմատաբար նվազում են՝ գրանցելով 24 «այո»՝ 1-ին մակարդակի համար և 26՝ 2-րդ մակարդակի:

Երբ խոսքը ցանցային համագործակցության կարողության կամ նպատակահարմարության մասին է, ակնհայտ է երկու հիմնախնդիր, որ մատնանշվում են որակական հարցազրույցների ընթացքում: Առաջինը ցանցերի իրավիճակային և անհետևողական լինելն է, որը հավանաբար կապված է երկրորդ՝ գաղափարական խնդրի հետ. կազմակերպությունները չեն միավորվում խնդիրներ լուծելու շուրջ՝ մոտիվացիան այլ է:

Ես չեմ տեսնում, որ մենք խնդիրներից ելնելով ենք համախմբվում: Մենք համախմբվում ենք ծրագրերի, գաղափարների ու փողերի շուրջ: Հետո էդ փողերը սկսում ենք տենց ծախսել, ծրագրեր անել ավելի պուճուր-պուճուր, արդյունավետության գնահատման մասով էլի կասկածներ ունեմ, ը-ը՛, ճիշտ թիրախներ ընտրելու մասով կասկածներ ունեմ:

Ծառայություն մատուցող կազմակերպություն, Երևան

Հենց ֆինանսավորումը դադարում ա, էդ ցանցը ևս դադարում ա::

Ծառայություն մատուցող կազմակերպություն, Երևան

Մեխանիզմը կամ պետք ա փոխվի... պետք ա լինի պատասխանատու օրգան կամ մարդ... լավ, տենց ասեմ շարժիչ ինչ-որ բան ա պետք, որպեսզի միշտ աշխատացնի էդ ցանցը: Թե չէ ասում եմ իմ երեսուն տարվա ընթացքում ինչքան ցանց ասես կազմել ենք, ստորագրել ենք, որը որ գնացել ենք տուն՝ հետևներիցս չի եղել: Չգիտեմ:
Գումա՞րն ա մեղավոր, թե՞ մարդիկ:

Ծառայություն մատուցող կազմակերպություն, Գեղարքունիք

Ամփոփելով՝ որոշ վերապահումներով կարելի է եզրակացնել, որ կազմակերպությունների մեծ մասը պատրաստակամ է համագործակցելու համայնքների հետ, սակայն ի համեմատ պատրաստակամության մակարդակի, ավելի ցածր մակարդակ է նկատվում համագործակցային կարողությունների կամ ցանցերին հասանելիության տեսանկյունից:

Կազմակերպական և ադվոկացիոն կարիքներ

Թեպետ վերլուծության նախորդ ենթաբաժիններն անուղղակիորեն հուշում են, թե կազմակերպություններն ինչ ադվոկացիոն կարողությունների զարգացման կարիքներ ունեն, քանակական հարցման շրջանակներում մենք նաև ուղղակիորեն ենք ստուգել մի շարք ադվոկացիոն և կազմակերպական կարիքների կարևորումը: Կարիքներից յուրաքանչյուրի ակտուալությունը կազմակերպությունները գնահատել են «շատ», «մասնակի» և «քիչ/ընդհանրապես» սանդղակով (տե՛ս Գծապատկեր 14):

Գծապատկեր 14. Կազմակերպությունների կարիքները՝ «շատ» պատասխանի նվազման կարգով



Այսպես՝ կարիքների ցուցակում բացարձակ առաջատարը ֆոնդահայթայթման հմտություններն են. կազմակերպություններից ընդամենը 3-ն են նշել, որ այդպիսի հմտությունների կարիք քիչ ունեն կամ չունեն ընդհանրապես: Շարքում հաջորդ կարողությունները, որոնք զարգացնելու կարիքը կազմակերպությունները «շատ» են զգում, ներառում են ռազմավարական պլանավորման հմտությունները, համապատասխան օրենսդրության մասին գիտելիքը, ինչպես նաև ադվոկացիայի և շահապաշտպանության կարողությունները: Տվյալներից երևում է նաև, որ «շատ» պատասխանն ամենաքիչը ստացած կարիքներն են՝ համագործակցությունն ու ցանցեր ձևավորելու հմտությունները, ծրագրային կառավարման հմտությունները, ֆինանսական կառավարման հմտությունները և համայնքի հետ աշխատելու հմտությունները:

Փորձենք ավելի պարզեցնել պատկերը՝ միևնույն ցուցանիշները «կարդալով» մեկ այլ տեսանկյունից: 15-րդ գծապատկերում ներկայացված են նույն տվյալները, սակայն «շատ» և «մասնակի» պատասխաններն այստեղ միավորված են. միավորված են նաև «քիչ/ընդհանրապես» և «դժվարանում եմ պատասխանել» պատասխանները:

Գծապատկեր 15. Կազմակերպությունների կարիքները՝ «շատ» և «մասնակի» պատասխանների միավորված հաճախականության նվազման կարգով



Թեև ֆոնդահայթայթման հմտությունները կրկին առաջին տեղում են, ակնհայտ է, որ որոշ կարիքներ, թեպետ ավելի շատ «մասնակի» գնահատականն են ստացել կարիքների ցանկում, ընդհանուր առմամբ բավականին մեծ կարևորություն են ստացել գնահատման ողջ սանդղակի մակարդակով, քան ուրիշները: Օրինակ՝ 15-րդ գծապատկերից երևում է, որ ադվոկացիայի և շահապաշտպանության կարիքները երկու մակարդակ դեպի վեր են բարձրանում: Ակնհայտ է նաև, որ համագործակցությունը և ցանցեր ձևավորելու հմտությունները 9-րդ հորիզոնականից բարձրանում են 3-րդ հորիզոնական: Կազմակերպությունները նաև նշել են, որ ամենաքիչը ունեն համայնքի հետ աշխատելու կարողությունները զարգացնելու կարիք. հարաբերականորեն ցածր ցուցանիշ են գրանցել ֆինանսական կառավարման և ՁԼՄ-ների հետ արդյունավետ հաղորդակցվելու հմտությունները:

Որակական ուսումնասիրությունը ևս փաստում է, որ որոշ դեպքերում շահերի պաշտպանություն իրականացնելու խոչընդոտները պայմանավորված են կազմակերպության կարողություններով: Ոչ բոլոր կազմակերպություններն ունեն շահերի պաշտպանություն իրականացնելու գիտելիքներ և փորձ: Ֆինանսական և մարդկային ռեսուրսները ևս հաճախ հիշատակվող խոչընդոտներից են:

> *Նկատի ունեմ և՛ մարդկային ռեսուրսներ, և՛ ֆինանսական ռեսուրսներ: Դե գնալ, հանդիպում կազմակերպել, կոնֆերանս անել, էդ ամեն ինչը: Կարող ա մեկը ասի՝ դե չէ, շահապաշտպանություն անելու համար պետք չէ ռեսուրս, բայց պետք են: Թեկուզ հենց տեսահոլովակների պատրաստում կամ նաև նյութերի, ռեսուրսների ստեղծում, հետազոտություն անել՝ ամենակարևորը, էդ ամեն ինչն էլ կախված է ֆինանսական ռեսուրսներից: Ու եթե չունես՝ չես կարող անել:*
>
> Ծառայություն մատուցող կազմակերպություն, Գեղարքունիք

Մեկ այլ խոչընդոտ, որ նշվում է Հայաստանում ադվոկացիոն գործունեություն իրականացնելու առումով, դրա միակողմանիությունն է:

> *Հիմնական խոչընդոտներից մեկը այն է, որ միակողմանի ա էդ շարժումը, որովհետև չկան քաղաքական կամք, ցանկություն կամ գիտելիք, չգիտեմ, չվերլուծենք...*
> *Չկա, որոշում կայացնողների, պետական մարմինների ներկայացուցիչների մոտ չկա...*
> *Դա է հիմնական խոչընդոտը, ըստ իս, գոնե մեզ համար:*
>
> Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Երևան

Շատ կազմակերպությունների մասնագետներ չունեն նաև իրավաբանական կամ շահապաշտպանական գիտելիքներ: Սա հատկապես առանցքային է մարզային ՀԿ-ների համար, քանի որ, թեպետ համայնքապետարաններում կան իրավաբաններ, սակայն նրանց փորձառությունը չի բավարարում՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նեղ ոլորտը:

Գիտեք՝ մեր ոլորտում հոգեբան, հատուկ մակավարժ, չգիտեմ... Էդ մասնագետները իրանք ամեն ինչ չեն կարող իմանալ, հատկապես երբ որ դա շահերի պաշտպանությանն ա ուղղված:
Ստեղ պետք են իրավաբաններ, պետք են ոլորտի մասնագետներ, ովքեր ավելի գրագետ ձևով կկարողանան Էդ ամեն ինչը իրականացնել:

Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն, Արմավիր

Ամփոփիչ մտքեր

4

Այս բաժինն ամփոփում է զեկույցը՝ ներկայացնելով տվյալների վերլուծությունից դուրս բերված այն առանցքային բացահայտումները, որոնք կարող են օգտակար հուշումներ պարունակել ծրագրի շրջանակներում կամ դրանցից դուրս համապատասխան գործողությունների պլանավորման և քաղաքականության բարելավման առումով:

	Բացահայտումներ	Հուշում-առաջարկներ
1	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների մի մասին ծանոթ չեն ադվոկացիա և ջատագովություն տերմինները, իսկ դրանց ծանոթ կազմակերպությունների մի մասը հասկացությունները մեկնաբանելիս հիմնվում է դրանց լեզվական, այլ ոչ՝ բովանդակային իմաստավորման վրա:	Կազմակերպությունների համար հստակ և մատչելի կերպով սահմանել ադվոկացիա, ջատագովություն և շահերի/իրավունքների պաշտպանություն հասկացությունները: Կարևոր է, որ բոլորի համար պարզ դառնա, թե որ հասկացությունը ինչ գաղափար, երևույթ կամ գործունեություն է նկարագրում և ենթադրում: Այս տերմինաբանական իրազեկումը կարևոր հենք կարող է դառնալ ադվոկացիոն կարողությունների զարգացմանն ուղղված հետագա գործողությունների համար:
2	Ադվոկացիոն տերմինաբանությանն իրազեկված լինելը ակնհայտորեն զուգորդվում է ադվոկացիոն փորձառության հետ: Տերմիններին անծանոթ կազմակերպությունների մեծ մասը նաև չի մասնակցել ադվոկացիոն հանձնաժողովի կամ կոալիցիայի աշխատանքների, չի իրականացրել քաղաքականության վերլուծություն կամ չի ներկայացրել բարելավման առաջարկներ, չի մասնակցել հանրային ակցիաների կամ բողոքի ցույցերի, չի իրականացրել հետազոտություն կամ չի վերլուծել կոնկրետ հիմնախնդիր:	Իրազեկվածության հիմնախնդիրը դիտարկել ադվոկացիոն փորձառության հետ համատեղ: Կազմակերպությունները, կարողանալով ճշգրտորեն սահմանել և տարբերակել իրենց գործունեության այս կամ այն կողմը, ավելի լավ կպատկերացնեն, թե որքան ադվոկացիոն փորձառություն և պոտենցիալ են կուտակել: Օգտակար կարող է լինել ադվոկացիոն պոտենցիալի գնահատման գործիք ստեղծելը կազմակերպությունների համար՝ ապահովելով, որ նրանք ժամանակ առ ժամանակ ինքնագնահատման միջոցով ճանաչեն սեփական կարողությունները:

3	Կազմակերպությունների դիրքորոշումը հաշմանդամության մոդելների հայեցակարգման հարցում տեղ-տեղ արմատապես տարբեր է: ՀԿ-ների մի մասը համարում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները պետք է պաշտպանեն միայն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները, մինչդեռ մյուսները կարծում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն բժշկական օգնության կամ բարեգործական աջակցության կարիք: Հաշմանդամության մոդելների նկատմամբ ոչ միասնական մոտեցումը այդքան սահմանափակ թվով ՀԿ-ներ ունենալու պարագայում թուլացնում է ադվոկացիոն ակտիվության ներուժը և համատեղ գործող համայնք ունենալու հնարավորությունը:	Անկախ նրանից, թե հաշմանդամության որ մոդելն է ավելի նախընտրելի այս կամ այն իրավիճակում, կազմակերպությունների համայնք ձևավորելու տեսանկյունից նույն (կամ նույնանման) գաղափարախոսական դիրքերից հանդես գալը կարևոր է: Այս առումով օգտակար կարող են լինել կազմակերպությունների միջև երկխոսության հարթակները՝ հաշմանդամության համընդհանուր ադվոկացիոն հայեցակարգ մշակելու և դրա շուրջ համաձայնելու նպատակով: Կարևոր է լսելի դարձնել և համակարգայնորեն վերլուծել հատկապես այն կազմակերպությունների ձայնը, որոնք գիտակցված կերպով մերժում կամ խնդրայնացնում են հաշմանդամության սոցիալական մոդելի բացառիկությունը՝ փոխարենը կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպությունների հիմնարար պահանջմունքների բավարարումը: Սա կարող է մի կողմից ամրապնդել համայնքի զգացողությունը, իսկ մյուս կողմից՝ հասցեագրել սոցիալական մոդելի խնդրահարույց կամ թույլ կողմերը:
4	Կազմակերպությունների ադվոկացիոն իրազեկվածությունն ու փորձառությունը շաղկապված են նրանց ադվոկացիոն դիրքորոշման հետ: Հաշմանդամության մոդելների նկատմամբ վերաբերմունքը պատճառահետևանքային կապի մեջ է ադվոկացիոն տերմինաբանությանը ծանոթ լինելու հանգամանքի հետ: Ադվոկացիոն իրազեկվածության ցածր մակարդակ ցուցաբերած կազմակերպություններն ավելի հակված են համաձայնելու հաշմանդամության ավանդական մոդելի դրույթներին: Բացի այդ, երբևէ քաղաքականության վերլուծություն իրականացրած կազմակերպությունները հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը համարում են իրենց գործունեության առանցքային կետ:	Ադվոկացիոն իրազեկվածությունը, փորձառությունը և դիրքորոշումը դիտարկել որպես եռամիասնություն: Սրանք այս կամ այն կերպ միմյանց պայմանավորող գործոններ են, հետևաբար կարևոր է, որ հետազոտությանը հաջորդող գործողությունները, պահպանելով տվյալահենքության սկզբունքը, թիրախավորեն այս երեք գործոնները համատեղ և ոչ՝ միմյանցից մեկուսացված: Քաղաքականության վերլուծությունները, հետազոտական հմտություններ զարգացնելը և տվյալների հիման վրա քաղաքականության բարելավմանն ուղղված գործունեություն իրականացնելը կարող են աջակցող միջավայր ստեղծել խնդիրների վերոնշյալ եռամիասնությունը հասցեագրելու համար:
5	Արտաքին աշխարհի, այդ թվում՝ քաղաքականության և ոլորտի այլ կազմակերպությունների հետ կապը շատ կազմակերպությունների դեպքում խիստ անձնավորված է՝ պայմանավորված կազմակերպության ղեկավարի անձով:	Կազմակերպություններին իրազեկել ինստիտուցիոնալ իմիջի կարևորության մասին և խրախուսել իրենց հանրային իմիջը ուղղորդելու դեպի ավելի ոչ անձակենտրոն ինքնաներկայացում և արտաքին հաղորդակցություն: Այս տեսանկյունից օգտակար կարող է լինել նաև կազմակերպություններին աջակցելը ռազմավարական և շահապաշտպանության տարեկան և բազմամյա պլաններ կազմելու հարցում:
6	Կազմակերպությունները մեծ մասամբ պատրաստակամ են ներգրավվել ցանցային համագործակցություններում, սակայն նրանց կարողությունները և նպատակադրումը ընդհանուր առմամբ բավարար պայմաններ չեն ապահովում նման համատեղ գործունեության համար: Ցանցերի նկատմամբ կան նաև վերապահումներ. դրանք չեն համարվում կայուն, քանի որ հաճախ իրավիճակային և	Տարատեսակ հարթակների, քննարկումների և աշխատարանների միջոցով կազմակերպությունների շրջանում ձևավորել համայնքի զգացություն: Կարևոր է, որ կազմակերպությունները գիտակցեն, որ, անկախ գործունեության տեսակից, իրենք կարող են միավորվել մեկ ընդհանուր նպատակի շուրջ: Օգտակար կարող է լինել նաև ցանցային համագործակցության ուղենիշներ սահմանելն ու մշակելը՝ ապահովելու ցանցերի կայունությունն ու

	անհետևողական են իրենց գործողություններում, ինչպես նաև դրանք չեն կարողանում միավորել կազմակերպություններին խնդիրներ լուծելու ընդհանուր մոտիվացիայի շուրջ:	հետևողականությունը, ինքնաֆինանսավորման կարողությունները և քաղաքականության խնդիրների վրա ազդելու ներուժը: Միևնույն ժամանակ, արդեն գործող կազմակերպական ցանցերին և կոալիցիաներին պետք է խրախուսել առավել բաց և ինտեգրող քաղաքականություն վարել՝ համագործակցելու պատրաստակամ կազմակերպություններին համայնքում ներառելու նպատակով:
7	Ընդհանուր առմամբ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները ադվոկացիոն և կազմակերպական կարողությունների զարգացման կարիք են զգում: Նրանք առաջնահերթ են համարում ֆոնդահայթայթման կարողությունների, ադվոկացիոն և շահապաշտպանության հմտությունների, համագործակցության և ցանցեր ձևավորելու հմտությունների զարգացումը:	Նախաձեռնել և անցկացնել կազմակերպությունների ադվոկացիոն և կազմակերպական կարիքները հասցեագրող դասընթացներ: Արժի հատկապես շեշտադրել ֆինանսական անկախության հասնելու, ադվոկացիոն գործունեության և արդյունավետ ցանցային համագործակցության հմտությունները: Օգտակար կարող է լինել ֆոնդահայթայթման ուղեցույցի կազմումը, որտեղ կարող է նաև հատուկ շեշտադրվել շահապաշտպանական և ադվոկացիոն տարատեսակ գործողությունների միջոցով ֆինանսական առավել մեծ կայունության հասնելը:

Հավելվածներ

5

Հավելված 1

Առցանց հարցման կիսաձևայնացված հարցաթերթ

Ողջույն: Ես _____ -ն եմ, անկախ հետազոտող եմ:
Ներկայացնում եմ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ն, որը ներկայումս իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների կարիքների գնահատում: Մենք իրականացնում ենք հեռախոսային հարցումներ՝ փորձելով պարզել, թե հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ՀԿ-ները ինչպիսի ադվոկացիոն փորձառություն և կարիքներ ունեն, որպեսզի կազմակերպությունը կարողանա առավել նպատակաուղղված կերպով աջակցություն և կարողությունների զարգացում իրականացնել այս ուղղությամբ:
Ձեր և ձեր կազմակերպության կարծիքը, մոտեցումները և փորձառությունը շատ կարևոր են ոլորտում իրավիճակը հասկանալու և գնահատելու համար: Մեր հարցումը կտևի ընդամենը 15 րոպե, որի ընթացքում ես կհնչեցնեմ կոնկրետ հարցեր և կխնդրեմ, որ հերթով պատասխանեք դրանց:

OID Կազմակերպության կոդը[10]

[ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ. ՉԿԱՐԴԱԼ, ԼՐԱՑՆԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ]

10. Հարցման պոտենցիալ մասնակից բոլոր կազմակերպությունները նախանշվել են եզակի կոդերով, որը պարունակում է կազմակերպության մասին ամբողջական տեղեկատվությունը՝ ըստ ընտրանքի հիմքի (անվանում, գտնվելու վայր, առաջնահերթության խումբ և այլն):

S1 Կցանկանա՞ք մասնակցել հարցմանը:
1 Այո → S2
2 Ոչ → S0 → Ավարտել հարցումը

S0 Շատ լավ, ներողություն: Այդ դեպքում միայն մեկ խնդրանք՝ կնշե՞ք, թե ինչու չեք ցանկանում մասնակցել:

[ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ. ԲԱՌԱՑԻՈՐԵՆ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼ ԵՎ ԱՎԱՐՏԵԼ ՀԱՐՑՈՒՄԸ]

S2 Նշեք, խնդրեմ, ձեր պաշտոնը կազմակերպությունում:

Բաժին 1. Առնչություն ադվոկացիային

K1 Ծանո՞թ են ձեզ «ադվոկացիա» կամ «ջատագովություն» տերմինները:
1 Այո → K1.1 → E1
2 Ոչ → K1.2 → E1

K1.1 Ինչպե՞ս կմեկնաբանեք այդ հասկացությունները:

K1.2 Իսկ կասե՞ք՝ ինչ եք պատկերացնում, երբ լսում եք այդ բառերը:

[ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ. ՄԻՆՉԵՎ ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԻՆ ԱՆՑՆԵԼԸ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ, ԹԵ ԻՆՉ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆՔ՝ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԴՎՈԿԱՑԻԱ, ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՍԵԼՈՎ]

E1 Ձեր կազմակերպությունը երբևէ իրականացրե՞լ է ադվոկացիա/շահերի պաշտպանություն:
1 Այո
2 Ոչ → E4

E2 Ունե՞ք աշխատակից, որը հենց համակարգում է կազմակերպության կողմից իրականացվող շահապաշտպանական գործունեությունը:
1 Այո
2 Ոչ

E3 Ձեր կազմակերպությունն ունի՞ ադվոկացիայի/շահերի պաշտպանության պլան կամ ռազմավարություն:
1 Այո
2 Ոչ

E4 Հիմա կթվեմ մի շարք գործողություններ, որոնց որոշ կազմակերպություններ դիմում են հանրային քաղաքականության որևէ խնդիր բարձրաձայնելու համար: Յուրաքանչյուրի համար խնդրում եմ նշեք, թե արդյոք ձեր կազմակերպությունը վերջին 5 տարում այդ գործողությանը դիմել է:

		Այո	Ոչ	ՀՊ	ԴՊ
1	Օգտվել է մեդիայից (այդ թվում՝ սոցցանցերից) կամ հանրային միջոցառումներից	1	0	98	99
2	Կապ է հաստատել որևէ հանրային/քաղաքական գործչի կամ նրա գրասենյակի հետ	1	0	98	99
3	Մասնակցել է ադվոկացիոն հանձնաժողովի կամ կոալիցիայի աշխատանքներին	1	0	98	99
4	Մասնակցել է հանրային ակցիաների կամ բողոքի ցույցերի	1	0	98	99
5	Իրականացրել է քաղաքականության վերլուծություն և ներկայացրել բարելավման առաջարկներ	1	0	98	99
6	Իրականացրել է հետազոտություն և վերլուծել կոնկրետ հիմնախնդիր	1	0	98	99

Բաժին 2. Դիրքորոշում ադվոկացիայի նկատմամբ

ATT1 Այժմ ես կկարդամ երեք պնդում հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների վերաբերյալ: Խնդրում եմ՝ դրանցից ամեն մեկի համար նշեք՝ լիովին համաձայն եք, մասամբ համաձայն եք, թե ընդհանրապես համաձայն չեք:

		Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Ընդհանրապես համաձայն չեմ	ՀՊ	ԴՊ
1	Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը և ադվոկացիան պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների գործունեության առանցքում:	1	2	3	98	99
2	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները պետք է պաշտպանեն միայն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը:	1	2	3	98	99
3	Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն բժշկական օգնության և բարեգործական աջակցության կարիք:	1	2	3	98	99

ATT2 Իսկ հիմա կկարդամ ևս երեք պնդում: Խնդրում եմ՝ մտքում ունենալով ձեր կազմակերպությունը, նշեք՝ լիովին համաձայն եք, մասամբ համաձայն եք, թե ընդհանրապես համաձայն չեք:

		Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Ընդհանրապես համաձայն չեմ	ՀՊ	ԴՊ
1	Մեր կազմակերպությունը պատկերացնում է, թե ինչպես է մշակվում որևէ ոլորտի քաղաքականությունը:	1	2	3	98	99
2	Մեր կազմակերպության գործունեությունը կապված է քաղաքական գործընթացների և կանոնակարգերի հետ:	1	2	3	98	99
3	Մեր կազմակերպությունը կարող է ազդեցություն ունենալ կոնկրետ քաղաքական խնդրի վրա:	1	2	3	98	99

Բաժին 3. Ցանցեր և համագործակցություն

NET1 Ձեր գնահատմամբ՝ որքանո՞վ է կարևոր ցանցային համագործակցությունը ձեր կազմակերպության արդյունավետ գործունեության համար:

1 Շատ կարևոր է
2 Հիմնականում կարևոր է
3 Հիմնականում կարևոր չէ
4 Ընդհանրապես կարևոր չէ → NEED

NET2 Հիմա կթվարկեմ մի քանի պնդումներ: Խնդրում եմ՝ նշեք, թե արդյոք դրանցից յուրաքանչյուրը նկարագրո՞ւմ է ձեր կազմակերպության գործունեությունը վերջին 3 տարում:

		Այո	Ոչ	ՀՊ	ԴՊ
1	Կազմակերպության հիմնադիրները լրջորեն հետաքրքրված են մեր հասարակությունում փոփոխություններ իրականացնելու հարցով:	1	0	98	99
2	Կազմակերպությունը համայնքային/տեղական ցանցի/կոալիցիայի մաս է, որը զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով:	1	0	98	99
3	Կազմակերպությունը ցանցերի մաս լինելը համարում է ռեսուրսները հզորացնելու նախապայման:	1	0	98	99
4	Կազմակերպությունը օգտագործել է ցանցային համագործակցությունը ռեսուրսները հզորացնելու և նպատակներին հասնելու համար:	1	0	98	99
5	Կազմակերպությունը պետական/միջազգային ցանցի մաս է:	1	0	98	99
6	Կազմակերպությանը պարբերաբար դիմում են, որ այն միանա հաշմանդամություն ունեցող անձանց կոալիցիայի:	1	0	98	99

NEED Եվ վերջին հարցը: Թվարկելու եմ մի շարք կարողություններ, որոնց կարիքը տարբեր կազմակերպություններ երբեմն ունենում են: Խնդրում եմ՝ յուրաքանչյուրի համար նշեք, թե արդյոք ձեր կազմակերպությունը որքան է զգում այդ կարողությունը զարգացնելու կարիքը՝ շա՞տ, մասնակի՞, թե՞ քիչ/ընդհանրապես:

		Շատ	Մասնակի	Քիչ/ ընդհանրապես	ՀՊ	ԴՊ
1	Ֆոնդահայթայթման հմտություններ	1	2	3	98	99
2	Դրամաշնորհային ծրագրերի հայտ գրելու հմտություններ	1	2	3	98	99
3	Ռազմավարական պլանավորման հմտություններ	1	2	3	98	99
4	Ադվոկացիայի և շահերի պաշտպանության կարողություններ	1	2	3	98	99
5	Գիտելիք հաշմանդամություն ունեցող անձանց մասին պետական օրենսդրության և իրավական կարգավորումների վերաբերյալ	1	2	3	98	99
6	Համագործակցություն և ցանցեր ձևավորելու հմտություն	1	2	3	98	99
7	Ծրագրային կառավարման հմտություններ	1	2	3	98	99
8	Բանակցություններ վարելու հմտություններ	1	2	3	98	99
9	ՁԼՄ-ների հետ արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ	1	2	3	98	99
10	Համայնքի հետ աշխատելու կարողություններ	1	2	3	98	99
11	Ֆինանսական կառավարման հմտություններ	1	2	3	98	99
12	Ինստիտուցիոնալ կառավարման կարողություններ	1	2	3	98	99

Հավելված 2

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցի ուղեցույց

Ողջույն: Ես _____ -ն եմ, անկախ հետազոտող եմ:
Ներկայացնում եմ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ն, որը ներկայումս իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների կարիքների գնահատում:
Դուք հավանաբար արդեն մասնակցել եք մեր հեռախոսային հարցմանը և երևի գիտեք, որ մենք փորձում ենք պարզել, թե հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ՀԿ-ները ինչպիսի ադվոկացիոն փորձառություն և կարիքներ ունեն, որպեսզի կազմակերպությունը կարողանա առավել նպատակաուղղված կերպով աջակցություն և կարողությունների զարգացում իրականացնել այս ուղղությամբ:
Հեռախոսային հարցումից բացի, մենք նաև հանդիպում ենք հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններից մի քանիսի ղեկավարների հետ՝ մի փոքր ավելի մանրամասն և խորացված զրույցներ ունենալու համար: Մենք կցանկանայինք ավելի շատ լսել ձեր փորձառության և կարիքների վերաբերյալ և անչափ շնորհակալ ենք, որ համաձայնել եք հանդիպել մեզ հետ:
Այս հանդիպման շրջանակներում ես կցանկանամ մի քանի հարցեր ուղղել, որոնց կխնդրեմ, որ պատասխանեք հնարավորինս հանգամանալից՝ մտքում ունենալով ձեր կազմակերպության փորձն ու կարիքները: Ձեր թույլտվությամբ ես կձայնագրեմ մեր զրույցը, որպեսզի ոչ մի կարևոր միտք բաց չթողնեմ:
Հավաստիացնում եմ, որ ձայնագրությունը հասանելի է լինելու միայն հետազոտողների թիմին և չի օգտագործվելու որևէ այլ նպատակով, քան ձեր մտքերը ճշգրիտ վերարտադրելը:
Զրույցը կտևի մոտ 30-40 րոպե: Նախապես շնորհակալ եմ ձեր տրամադրած ժամանակի համար:
Մինչև սկսելը, ունե՞ք ինչ-որ հարցեր այս զրույցի կամ հետազոտության մասին ընդհանրապես:
Դե ինչ, սկսենք:

1. Մի փոքր կպատմե՞ք ձեր կազմակերպության մասին:

Ճշգրտող հարցեր.
- Ե՞րբ է այն ստեղծվել, որտե՞ղ է հիմնականում գործառնում:
- Ինչպիսի՞ գործունեություն է ծավալում և ի՞նչ թիրախ ոլորտների/խմբերի շրջանում:

2. Ի՞նչ առնչություն ունի ձեր կազմակերպությունը ադվոկացիայի հետ:

Ճշգրտող հարցեր՝
- Ինչպիսի՞ ադվոկացիոն գործողություններ եք իրականացնում:
- Ունե՞ք ընթացիկ ծրագրեր, որոնցում ադվոկացիա/ջատագովություն եք իրականացնում: Մի քանի օրինակ կնշե՞ք, խնդրեմ:
- Կնկարագրե՞ք այն քայլերը, որոնց միջոցով ձեր կազմակերպությունը ադվոկացիա է իրականացնում:

3. Հավանաբար հիշում եք, որ հեռախոսային հարցման ժամանակ ձեզ տված հարցերից մեկը վերաբերում էր հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնություն և բարեգործական աջակցություն տրամադրելուն: Ուզում եմ խնդրել՝ մի փոքր խոսենք այս մոտեցման մասին: Ի՞նչ եք մտածում այս մոտեցման մասին: Ինչո՞ւ:

4. Ըստ ձեզ՝ որքանո՞վ կարող է ձեր կազմակերպությունն ազդեցություն ունենալ հանրային քաղաքականության այնպիսի ոլորտների վրա, որոնք ուղղակիորեն առնչվում են հաշմանդամություն ունեցող անձանց շահերին:

Ճշգրտող հարցեր.
- Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Ինչպե՞ս եք պատկերացնում այդ ազդեցությունը:

5. Ի՞նչ օգուտներ կարող է բերել ադվոկացիոն գործունեությունը հաշմանդամություն ունեցող անձանց և ընդհանրապես: Իսկ ի՞նչն է խանգարում հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին ադվոկացիոն գործունեություն ծավալելու հարցում:

6. Ի՞նչ է պետք անել, որ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող պետական քաղաքականությունը ներառական լինի: Կոնկրետ ձեր կազմակերպությունը ի՞նչ կարող է անել այդ ուղղությամբ, որ չի անում: Ինչո՞ւ չի անում:

7. Ի՞նչ մոտեցում և փորձ ունի ձեր կազմակերպությունը ցանցային համագործակցությունների նկատմամբ: Ըստ ձեզ՝ դա Հայաստանում արդյունավե՞տ միջոց է ուժերը և ռեսուրսները միավորելու: Ինչո՞ւ:

8. Ըստ ձեզ՝ ի՞նչ կարիքներ ունի ձեր կազմակերպությունը, որոնց հասցեագրման դեպքում հնարավոր կլինի զարգացնել ձեր կազմակերպության կարողությունները՝ ադվոկացիոն գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Սրանով մեր զրույցն ավարտված է: Մինչև ավարտելը, ունե՞ք որևէ հավելյալ ասելիք, որ կցանկանայիք կիսել մեզ հետ:
Շնորհակալ եմ տրամադրած ժամանակի համար:

Հավելված 3

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ընդլայնված ցանկ

Ադվոկացիոն առաջնահերթություն	Հայերեն անվանում	Կազմակերպության տեսակ
Առաջնային	ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիա	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	Հայաստանի պարաաթլետիկայի ֆեդերացիա	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	Հայաստանի անվասայլակով բասկետբոլի ֆեդերացիա	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Սպիտակ ձեռնափայտ» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Սատար» հաշմանդամների ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Ունիսոն» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Մենք կարող ենք» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Հայաստանի կույրերի միավորում» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Լիարժեք կյանք» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Էխո» հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպան ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Առաջնային	«Լուսաստղ» ԲՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Երկրորդային	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
Երկրորդային	Հաշմանդամային սպորտի հայկական ազգային ֆեդերացիա	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Աուտիզմ» ազգային հիմնադրամ	Ծառայություն մատուցող կազմակերպություն

Երկրորդային	«Քայլ առաջ» ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն բարեգործական ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Փյունիկ» Հայաստանի հաշմանդամություն ունեցող անձանց միություն	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Ուղի դեպի» ՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
Երկրորդային	«Ներառում Հայաստան» ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Հույսի կամուրջ» ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Երկրորդային	«Հայկական ճամբար» ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Հայ մայրեր» ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Լռության ձայն» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Երկրորդային	«Կարիտաս-Արեգակ» հիմնադրամ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երկրորդային	«Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երրորդային	Խարիսխ Սյունիքի մարզի հաշմանդամների ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երրորդային	«Սպիտակ բազե» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Երրորդային	«Սկարպ» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Երրորդային	«Ջերմիկ անկյուն» հիմնադրամ	Հիմնադրամ
Երրորդային	«Հույսի մեծամոր» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Երրորդային	«Հեշտ կյանք» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն
Երրորդային	«Խնամք» ՀԿ	Ծառայություն մատուցող կազմակերպություն
Երրորդային	«Աստղացոլք» ՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
Երրորդային	«Լուսէ» հիմնադրամ	Ծառայություն մատուցող կազմակերպություն

«Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության կազմակերպությունների ադվոկացիոն կարիքների գնահատում» հետազոտությունն իրականացվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի կողմից՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Հայաստանում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կիրարկման և հաշմանդամություն ունեցող անձանց ներառման ծրագրերի ներդրման համար բարենպաստ միջավայրի և էկոհամակարգի ստեղծում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընկերության Բազմագործընկեր նպատակային հիմնադրամի (UNPRPD MPTF) կողմից:

Զեկույցի բովանդակությունը բացառապես հեղինակների պատասխանատվությունն է, և դրանում արտահայտված մտքերն ու տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և/կամ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընկերության Բազմագործընկեր նպատակային հիմնադրամի տեսակետները:

© 2023, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ